

Ծանուցագիր

Սույն ծանուցագրով դուք տեղեկացվում եք, որ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների՝ Ձեր կողմից 05.03.2020թ.-ին նվիրատվությամբ ֆիզիկական անձ Վոսան Սուրենի Փահլևանյանից ձեռք է բերվել ք. Երևան, Էրեբունի փողոց, 14/1. շենք 18բն. հասցեում գտնվող անշարժ գույքի:

Համաձայն 17.12.2014թ.-ի թիվ 01/19-Փ-398-647 ավարտական ակտի ֆիզիկական անձ Վոսան Սուրենի Փահլևանյանը հանդիսանում է ք. Երևան, Էրեբունի փողոց, 14/1. Շենքի կառուցապատող:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ Օրենսգրք/ 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, 141-րդ հոդվածի համաձայն վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ:

Համաձայն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ: Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները: Սույն կետի կիրառության իմաստով՝ նվազեցվող եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ֆիզիկական անձի կողմից կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվությամբ գույքի ձեռքբերման մասով առաջանում է եկամտային հարկի պարտավորություն՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Ֆիզիկական անձը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ՝ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին պետք է ներկայացնի եկամտային հարկի տարեկան հաշվարկ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի, ինչը Ձեր կողմից չի իրականացվել:

Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բնամթերային /ոչ դրամական/ ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաներն ու ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են ազատ /շուկայական/ գների հիման վրա՝ ՀՀ կառավարության 09.03.2017թ" N241-Ն որոշման N1 հավելվածով:

Հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ թիվ N61821/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության համաձայն՝ Ձեր չկատարված հարկային պարտավորությունը 10.12.2021թ. դրությամբ կազմել է 3.027.869 դրամ, որից հարկ՝ 2.768.717 դրամ, տույժ 259.152 դրամ:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Դուք սույն ծանուցագիրը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին հրավիրվում եք ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի՝ ք. Երևան, Ս. Դավթի 87Ա հասցեով՝ վարչական վարույթի նախնական լսումներին մասնակցելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Ձեր չկատարված վերը նշված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: Ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների առաջարկում ենք ետօրյա ժամկետում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները:

Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել հարկ վճարողի դրամական միջոցների և գույքի արգելադրում ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ գլխի համաձայն: